ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՆԱԽԱՁԵՌՆԵԼ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

01.03.2019 15:28

Հարգելի փաստաբաններ,

2019թ. փետրվարի 28-ին փաստաբանական գրասենյակների ակումբի նիստի շրջանակներում քննարկվել է փաստաբանական գրասենյակների ցուցահանդես (EXPO) կազմակերպելու ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնության հարցը:

Ելույթ են ունեցել փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչները, մասնավորապես՝ Արմեն Տեր-Տաճատյանը, Արամ Վարդևանյանը, Արմինե Խաչատրյանը, Լևոն Սահակյանը, Հարություն Հարությունյանը, Կարեն Մեժլումյանը, Արա Ղազարյանը, Վահագն Մնացականյանը, Արմեն Հակոբյանը, Արամ Օրբելյանը: Ցուցահանդեսի կազմակերպման ընթացակարգային հարցերի շուրջ փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչները հանդես եկան մի շարք առաջարկություններով, որոնք առավելապես հանգեցին հետևյալին.

- Ցուցահանդեսի կազմակերպման հարցով դիմել մասնագետի՝ առավել լավ կազմակերպելու համար.

- Հնարավորություն ընձեռել նաև անհատ ձեռնարկատեր փաստաբաններին մասնակցելու ցուցահանդեսին.

- Ցուցահանդեսի շրջանակներում կազմակերպել նաև ոլորտային զեկուցումների ներկայացում այն ավելի հետաքրքիր դարձնելու համար.

- Սահմանել ցուցահանդեսին մասնակցելու համար նվազագույն չափանիշներ՝ բուկլետի, այցեքարտի, ներկայացուցչական փաստաթղթերի առկայություն և այլն.

- Ցուցահանդեսին հրավիրել ուսանողներին, ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրներին և լուսաբանել այն զանգվածային լրատվամիջոցներով:

Ամփոփելով ներկայացված առաջարկությունները՝

Տեղեկացնում ենք՝

1. 2019 թվականի ապրիլի 23-ին «ԵՐԵՎԱՆ ԷՔՍՊՈ»

ԿԵՆՏՐՈՆ-ում (Հասցե, 0033, Երևան. Հակոբ Հակոբյան փող., 3 շենք) տեղի կունենա փաստաբանական գրասենյակների ցուցահանդեսը՝ նախնական ժամը 10:00-18:00:

2. Ցուցահանդեսին կարող է մասնակցել անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող փաստաբանական գրասենյակը (իրավաբանական անձի 100 տոկոս մասնակիցները պետք է լինեն փաստաբաններ), որը՝

2.1. մինչև 15.03.2019 թվականը ՀՀ փաստաբանների պալատ կներկայացնի մասնակցության գրավոր հայտ (ստորագրված փաստաբանական գրասենյակի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատեր փաստաբանի կողմից. եթե դիմողն իրավաբանական անձ է, ապա նաև մասնակիցների մասին տեղեկություններ).

2.2. հայտում կամ առանձին գրավոր հայտարարությամբ կհավաստիացնի, որ ցուցահանդեսին մասնակցելու համար փաստաբանական գրասենյակը՝

- նախապես կվճարի տաղավարի* համար անհրաժեշտ գումարը «Պրոմ Էքսպո» ՍՊ ընկերությանը.

- ցուցահանդեսին փաստաբանական գրասենյակը կներկայացնի հետևյալ տեղեկատվական նվազագույն նյութերը՝ 100 հատ այցեքարտ, 100 հատ բուկլետ, 50 գրիչ, 1 X-Banner:

* **Տաղավար՝ 6 քառ. մետր** – արժեքը 25 000 ՀՀ դրամ (ներառում է՝ հետևի և կողքի պատերը, ճակատային պանել կազմակերպության անվանումով, 1 սեղան, 2 աթոռ, 220 V հոսանքի սնուցման կետ)

Ցուցահանդեսին մասնակցելու են նաև՝ ՀՀ փաստաբանների պալատը, հանրային պաշտպանի գրասենյակը և ՀՀ փաստաբանական դպրոցը:

Հ.Գ. Գրասենյակների հայտերն ընդունվելուց հետո, կրկին կիրավիրվի փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչների ակումբի նիստ՝ ցուցահանդեսի կազմակերպչական հարցերով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })